Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. մայիսի 11-ի թիվ 149-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3 էջ

Ամփոփագիր 4 էջ

Հաշվեքննության օբյեկտի
Ֆինանսական ցուցանիշները 5 - 13 էջեր

Անհամապատասխանությունների և խեղաթյուրումների կամ դրանց
բացակայության վերաբերյալ գրառումներ 13 -19 էջեր

Արձանագրված այլ փաստեր 19 -20 էջեր

Հետհսկողական գործընթաց 20 էջ

Առաջարկություններ 20 էջ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 24-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ոստիկանություն:
Հաշվեքննության առարկան	2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Աշխատանքային օրենսգիրք», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, պետական գնման պայմանագրեր:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	Նախատեսված էր 2021 թվականի փետրվարի 16-ից մինչև ապրիլի 15-ը: Հաշվեքննության կատարման ժամկետը ՀՀ հաշվեքննիչ պալատի թիվ 103-Ա որոշմամբ երկարաձգվել է մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :
Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ինքներորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվեքննության են ենթարկվել ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականին կատարված 40,060,786.4 հազ. դրամի ծախսերը:

ՀՀ ոստիկանության աշխատողների հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 21.02.2020թ. թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-1 և թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-1 կնքված պայմանագրերի առանձին չափաբաժիններ համաձայնագրերով լուծվել են: Սակայն, մինչև համաձայնագրեր կնքելը այդ պայմանագրերով պետք է հաշվարկվեր ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար ուշացված օրերի տույժ համապատասխանաբար՝ 295.5 հազ. դրամ և 373.5 հազ. դրամ:

ՀՀ ոստիկանությունը շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման համար «ԳՈԵԳԳՈԵՍՏՈՆ» ՍՊԸ հետ կնքել է 24.03.2020թ. թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 պայմանագիր՝ 10,000.0 հազ. դրամ արժեքով: ՀՀ ոստիկանությունը 26.11.2020թ. ծանուցումով՝ ծառայության մատուցման ժամկետը խախտելու համար միակողմանի լուծել է պայմանագիրը: ՀՀ ոստիկանությունը՝ ըստ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցման, տեղեկացրել է ընկերությանը, որ սահմանված կարգով վճարման պահանջագիր կներկայացնի «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ՝ 1,000.0 հազ. դրամ որակավորման ապահովման գումար և 100.0 հազ. դրամ պայմանագրի ապահովման գումար պետական բյուջե փոխանցելու համար: Սակայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից բանկ պետք է

ներկայացվեր վճարման պահանջագիր՝ պայմանագրի գնի չափով՝ 10,000.0 հազ. դրամ որակավորման ապահովման գումար և պայմանագրի գնի 10%-ի չափով՝ 1,000.0 հազ. դրամ պայմանագրի ապահովման գումար պետական բյուջե փոխանցելու համար:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են ոչ էական անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2020 թվականին ՀՀ ոստիկանությունը, ըստ ներկայացված հաշվետվության, հավաքագրել է 22,353,286.8 հազ. դրամ բյուջետային եկամուտներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականին գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

հազ. դրամ

Բյուջետային եկամուտների անվանում	**Հաշվետու ժամանակահատվածի ծրագրային ցուցանիշ**	**Հաշվետու ժամանակահատվածում ստացված եկամուտ**
Պետական տուրքեր	8,016,764.5	4,740,033.9
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	34,858.9	31,780.1
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր	9,188,000.0	9,534,326.9
ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից մուտքեր	10,905,203.7	8,035,144.9
ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման մուտքեր	35,000.0	12,001.0
Ընդամենը	28,179,827.1	22,353,286.8

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից հավաքագրվել է նախատեսվածից 5,826,540.3 հազ. դրամ պակաս եկամուտներ, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից պահպանվող իրավաբանական և ֆիզիկական անձանց օբյեկտների թվի էական կրճատումով, ինչպես նաև քաղաքացիների դիմելիությունով պայմանավորված պետական տուրքերի գանձման զգալի կրճատումով:

2020 թվականի համար պետական բյուջեի ծրագրերով ՀՀ ոստիկանության ծախսերի ճշտված պլանը կազմել է 65,010,761.3 հազ. դրամ, ֆինանսավորվել է 63,841,640.9 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ոստիկանության 2020 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագիր, միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Հասարակական անվտանգության ապահովում				
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար	25,947,202.7	25,858,065.7	25,857,806.6	25,850,747.3
Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում	4,228,613.1	4,199,012.9	4,198,809.1	4,198,284.5
ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	6,668.3	6,668.3	6,668.3	6,668.3
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	5,805,597.9	5,658,033.8	5,657,888.3	5,629,991.6
Պետական պահպանության ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	6,992.0	6,991.9	6,991.9	6,991.9
ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության շենքային պայմանների բարելավում	100.0	100.0	100.0	100.0
Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում				
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում	2,088,968.5	2,055,041.4	2,055,041.4	2,149,954.7
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում	94,385.3	59,736.3	59,736.3	59,736.3
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժանումների շենքային	122.0	122.0	122.0	122.0

պայմանների բարելավում				
Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում				
Առողջապահական ծառայությունների տրամադրում	1,053,902.0	1,034,554.3	1,034,554.3	1,034,554.3
Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	73,078.6	66,928.1	66,928.1	72,061.3
Ոստիկանության կրթական ծառայություններ				
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն	849,679.5	849,679.5	849,679.5	849,679.5
Միջին մասնագիտական կրթության ծառայություն	387,451.2	387,451.2	387,451.2	387,451.2
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն	257,771.1	257,771.1	257,771.1	257,771.1
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն				
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում	9,952,464.2	9,624,488.6	9,614,803.5	9,124,066.1
Արտասահմանյան պաշտոնական գրոծուղումներ	852.6	852.6	817.0	817.0
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում	191,861.6	162,217.1	162,217.1	162,217.1
ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավում	30,900.0	-	-	-
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում				
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում	13,161,940.3	12,828,117.5	12,827,501.6	12,129,120.0
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում	549,275.7	549,274.6	549,274.6	270,813.7
ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանությաուն» ծառայության կարիքի բավարարում	322,764.7	236,364.1	236,364.1	236,364.1
ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավում	170.0	170.0	170.0	170.0
Ընդամենը	**65,010,761.3**	**63,841,640.9**	**63,830,696.0**	**62,427,681.9**

ՀՀ ոստիկանության 2020 թվականի ծախսերի ճշտված պլանով նախատեսվել էր 65,010,761.3 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է

63,841,640.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսը 63,830,696.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.2 %-ը:

2020 թվականի պետական բյուջեով նախատեսվել է, որ ՀՀ ոստիկանության կողմից պետք է իրականացվի վեց ծրագրեր, դրանք են՝

1. «Հասարակական անվտանգության ապահովում» ծրագիր, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 35,995,174.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 35,728,872.6 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 35,728,264.2 հազ. դրամ, որը կազմում է ճշտված պլանի 99.3%-ը: Ծրագրի միջոցառումները վեցն են.

1.1 «Հասարակական կարգի պահպանություն ,անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 25,947,202.7 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 25,858,065.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 25,857,806.6 հազ. դրամ, որը կազմում է ճշտված պլանի 99.7%-ը:

1.2 «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 4,228,613.1 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել 4,199,012.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 4,198,809.1հազ. դրամ, որը կազմում է ճշտված պլանի 99.3%-ը:

1.3 «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, կատարան վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 6,668.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

1.4 «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 5,805,597.9 հազ.

դրամ, ֆինանսավորումը կազմել է 5,658,033.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 5,657,888.3 հազ. դրամ, որը կազմում է ճշտված պլանի 97.5%-ը:

1.5 «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 6,992.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

1.6 «ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության շենքային պայմանների բարելավում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 100.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

2. «Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում» ծրագիր, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,183,475.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 2,114,899.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.9 %-ը: Ծրագրի միջոցառումները երեքն են.

2.1 «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,088,968.5 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 2,055,041.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.4 %-ը:

2.2 «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 94,385.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 59,736.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 63.3%-ը:

2.3 «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 122.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

3. «Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում» ծրագիր, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 1,126,980.6 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 1,101,482.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.7 %-ը: 2020 թվականի պետական բյուջեով ծրագրի համար նախատեսվել էին երեք միջոցառումներ, սակայն պլանի ճշտմամբ հանվել է «ՀՀ ոստիկանության բժշկական վարչության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումը, որի համար նախատեսվել էր 2,660.0 հազ. դրամ:

3.1 «Առողջապահական ծառայությունների տրամադրում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 1,053,902.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 1,034,554.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.2%-ը:

3.2 «Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 73,078.6 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 66,928.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 91.6%-ը:

4. «Ոստիկանության կրթական ծառայություններ» ծրագիր, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,494,901.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Ծրագրի միջոցառումները երեքն են.

4.1 «Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր

849,679.5 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

4.2 «Միջին մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 387,451.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

4.3 «Նախնական մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 257,771.1 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

5. «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագիր, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 10,176,078.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 9,787,558.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.2%-ը, դրամարկղային ծախսը՝ 9,777,837.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.1%-ը: Ծրագրի միջոցառումները չորսն են.

5.1 «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 9,952,464.2 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 9,624,488.6 հազ.դրամ կամ ճշտված պլանի 96.7%-ը, դրամարկղային ծախսը՝ 9,614,803.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.6 %-ը:

5.2 «Արտասահմանյան պաշտոնական գրոծուղումներ» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 852.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով, դրամարկղային ծախսը կազմել է 817.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 95.8 %-ը:

5.3 «ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 191,861.6 հազ. դրամ,

ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 162,217.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 84.5 %-ը:

5.4 «ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 30,900.0 հազ. դրամ, ֆինանսավորում չի կատարվել:

6. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» ծրագիր, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 14,034,150.7 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 13,613,926.1 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 13,613,310.3 հազ. դրամ, որը կազմում է ճշտված պլանի 97.0%-ը: Ծրագրի միջոցառումները չորսն են.

6.1 «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 13,161,940.3 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 12,828,117.4 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 12,827,501.6 հազ. դրամ, որը կազմում է ճշտված պլանի 97.5%:

6.2 «Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 549,275.7 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

6.3 «ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառում, որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 322,764.7 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 236,364.1 հազ. դրամ կամ ճշտված պլանի 73.2 %-ը:

6.4 «ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավում» որի 2020 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել էր 170.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության 2020 թվականի միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը: ՀՀ ոստիկանության բյուջետային ծրագրերով նախատեսված միջոցառումների արդյունքային ցուցանիշները հիմնականում նկարագրում են ՀՀ ոստիկանության կողմից իրականացված միջոցառումների նպատակայնությունը: Միջոցառումների արդյունքի չափորոշիչները բնութագրում են այն գործոնները, որոնք կարևոր են այդ միջոցառումների շահառուների համար և որոնց հիման վրա գնահատվում է միջոցառումների էֆեկտիվությունը: Հաշվետվությամբ հիմնականում ներկայացվել են միջոցառումների քանակական բնույթի ցուցանիշներ, ինչպես նաև առանձին դեպքերում ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության շրջանակներում ներկայացվել են միջոցառումների արդյունքի չափորոշիչներով սահմանված որակական ցուցանիշներ, որոնք նկարագրում են իրականացված միջոցառումների որակական բնութագրերը: Տարեկան հաշվետվությունում առկա է տեղեկատվություն արդյունքի չափորոշիչների պլանային և փաստացի ցուցանիշների տարբերությունների պատճառների վերաբերյալ: ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի թիվ 254-Ն հրամանի հավելված 1-ի 9-րդ կետի համաձայն՝ «այն դեպքում, երբ հաշվետվության թվային մասում առկա են ծրագրային և փաստացի ցուցանիշների շեղումներ, որոնք ի հայտ են եկել ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության և այլ որոշումների ընդունման արդյունքում, ապա հաշվետվության վերլուծական մասում նշվում են այդ իրավական ակտերի (փաստաթղթերի) անվանումները և դրանց ընդունման հետևանքով նշված ցուցանիշների շեղումների հիմնավորումը»: Սակայն, հաշվետվության արդյունքային ցուցանիշների շեղումների պատճառների վերաբերյալ տեղեկատվությունում բացակայում են հղումներ իրավական կամ ենթաօրենսդրական ակտերին:

ՀՀ ոստիկանության 2020 թվականի տարեկան արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ հաշվետվության արդյունքի չափորոշիչները ներկայացված են հավելված 1-ում:

Հարկ է նշել, որ ըստ հաշվետվության ՀՀ ոստիկանության նյութատեխնիկական կարիքների բավարարման մասով ներկայացված պլանային ցուցանիշները հիմնականում թերակատարվել են, սակայն այդ մասով պլանավորված պահանջը վերանայելու վերաբերյալ հիմնավորումները ներկայացված չեն: Այսպես, «ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում» միջոցառման շրջանակում պլանավորված թվով 178 այլ մեքենաներից և սարքավորումներից փաստացի գնվել է 76 հատ, կամ նախատեսվածի 42.7%-ը, «ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառման շրջանակում՝ թվով 573 այլ սարքավորումների փոխարեն գնվել է 327 հատ, կամ նախատեսվածի 55.1%-ը, իսկ որպես տարբերությունների պատճառ նշվել է՝ «պայմանավորված է տարվա ընթացքում կարիքը վերանայելու հանգամանքով»:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ ոստիկանության 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթ է նախատեսվել 38,897,163.9 հազ. դրամ, որը ապահովելու համար հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը.

1. «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակում

աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր՝ 24,856,652.9 հազ. դրամ:

2. «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր՝ 4,071,318.8 հազ. դրամ:

3. «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր՝ 5,191,705.7 հազ. դրամ:

4. «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր՝ 1,882,567.6 հազ. դրամ:

5. Առանձին ծրագրերի միջոցառումների համար ՀՀ ոստիկանության կողմից կնքված 13 պայմանագրեր, որոնց շրջանակներում 2020 թվականին կատարված ծախսերը կազմել են 4,058,541.4 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, հաշվեքննության են ենթարկվել ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականին կատարված 40,060,786.4 հազ. դրամի ծախսերը:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն: ՀՀ ոստիկանության «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» (միջոցառում 1), «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» (միջոցառում 2), «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» (միջոցառում 3) և «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների

մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» (միջոցառում 4) բյուջետային ծրագրային միջոցառումներով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 169 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ոստիկանության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1		Միջոցառումներ 2 և 3		Միջոցառում 4	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	4	4	0	0	0	1
Ավագ խումբ	11	11	0	0	0	1
Միջին խումբ	56	56	1	1	2	2
Կրտսեր խումբ	57	58	17	19	0	1
Քաղ. Հատուկ ծառայող	1	1	0	0	6	8
Քաղ. Աշխատանք կատարող և տեխ. սպասարկող	3	3	2	2	0	1
Ընդամենը	132	133	20	22	8	14

Ընտրված աշխատողների հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության կողմից առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար կնքված պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	2020թ. տարեկան վճարում
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում			
Մուրադյան Շին ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ/2020/ՇԻՆ	5,280.0	4,811.3
ՊԱՀԱՊԱՆ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-1	31,654.6	31,654.6
ՊԱՀԱՊԱՆ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-1	9,381.7	9,381.7
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-2	83,160.0	83,160.0
ՄԷՍ-ՏԵՔՍ ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-3	36,846.3	36,846.3
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-4	30,600.7	30,600.7
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում			
«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ	ԲԸԱՀ ԾՁԲ-03/2017 04/2020	3,102,200.0	3,062,710.5
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԳՇՆՇ-19	466,799.9	466,360.5
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ՆՇԱՆ-20	40,716.2	39,504.2
«ՈՒԿՌԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2020-ՃՈ/ԱԶԴԱՆՇԱՆ-21	258,412.0	258,407.3
«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ	ՀՀ Ո ՄԱԾՁԲ-ՏՍԿ-ՃՈ-2020/Ա-35	63,000.0	15,702.9
«Ալիկանտե» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ-2020/ՃՈ	38,500.0	12,758.9
«ԳՌԵԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36	10,000.0	6,642.5
Ընդամենը		4,176,551.4	4,058,541.4

Նշված պայմանագրերի հաշվեքննության արդյունքում արձանագրվել է.

- ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 21.02.2020թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-1 պայմանագիր՝ 31,749.9 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 7 անվանում հանդերձանք: Կնքված 03.08.2020թ. թիվ 3 համաձայնագրով երկու անվանում՝ 6,396.0 հազ. դրամի «գլխարկ կիսաբրդյա» և 6,022.7 հազ. դրամի «վերնաշապիկ կարճաթև» չափաբաժինները լուծվել են ամբողջությամբ և պայմանագրի գինը վերահաշվարկվել ու կազմել է 19,329.2 հազ. դրամ: Սակայն, մինչև համաձայնագիր կնքելը «Պահապան» ՍՊԸ կողմից պետք է մատակարարվեր 4,157.4 հազ. դրամի «գլխարկ կիսաբրդյա» և 3,914.7 հազ. դրամի՝ «վերնաշապիկ կարճաթև», որը չի կատարվել, և մատակարարման

ժամկետների խախտման համար 2020 թվականի օգոստոսի 3-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 208.0 հազ. դրամ: Դրանից հետո կնքված 08.12.2020թ. թիվ 5 համաձայնագրով մեկ անվանում հանդերձանք՝ 6,308.0 հազ. դրամի «վերնաշապիկ ե/թ սպիտակ» չափաբաժինը լուծվել է ամբողջությամբ, իսկ 200 հատ «կոստյում կիսաբրդյա, ամենօրյա» չափաբաժինը մասնակի՝ 3,639.5 հազ. դրամի 130 կոստյումի չափով, և պայմանագրի վերջնական գինը կազմել է 9,381.7 հազ. դրամ: Սակայն, մինչև համաձայնագիր կնքելը պետք է մատակարարվեր 3,040.0 հազ. դրամի 950 հատ «վերնաշապիկ ե/թ սպիտակ», որը չի կատարվել: Փաստորեն, ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար մինչև համաձայնագիր կնքելու օրը՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ը ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 87.5 հազ. դրամ: Ընդհանուր առմամբ, «Պահապան» ՍՊԸ հետ կնքված 21.02.2020թ. թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-1 պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել՝ 295.5 հազ. դրամի տույժ:

- ՀՀ ոստիկանության և «Պահապան» ՍՊԸ միջև հանդերձանքի գնման համար 12.02.2020թ. կնքվել է թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-1 պայմանագիր՝ 49,697.8 հազ. դրամ արժեքով, որով նախատեսվել էր ձեռք բերել 3 անվանում հանդերձանք: Կնքված 03.08.2020թ. թիվ 3 համաձայնագրով «երկարաթև վերնաշապիկ» չափաբաժինը լուծվել է ամբողջությամբ և պայմանագրի գինը վերահաշվարկվել ու կազմել է 38,134.6 հազ. դրամ: Սակայն, ըստ պայմանագրի գնման ժամանակացույցի, մինչև համաձայնագիր կնքելը պետք է մատակարարվեր 7,516.0 հազ. դրամի «երկարաթև վերնաշապիկ», որը չի կատարվել, և մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի օգոստոսի 3-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 193.7 հազ. դրամ: Դրանից հետո կնքված 08.12.2020թ. թիվ 5 համաձայնագրով «վերնաշապիկ ե/թ սպիտակ» չափաբաժինը լուծվել է մասնակի՝ 6,480.0 հազ. դրամի 2000 հատ վերնաշապիկի չափով, և պայմանագրի վերջնական գինը կազմել է 31,654.6 հազ. դրամ: Սակայն, մինչև համաձայնագիր կնքելը պետք է

մատակարարվեր 6,480.0 հազ. դրամի 2000 հատ վերնաշապիկ, որը չի կատարվել: Փաստորեն, ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար մինչև համաձայնագիր կնքելու օրը՝ 2020 թվականի դեկտեմբերի 8-ը ենթակա էր հաշվարկել և գանձել՝ 179.8 հազ. դրամ տույժ: Ընդհանուր առմամբ, «Պահապան» ՍՊԸ հետ կնքված 21.02.2020թ. թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-1 պայմանագրի շրջանակում ենթակա է հաշվարկել և գանձել՝ 373.5 հազ. դրամի տույժ:

- ՀՀ ոստիկանության 2020 թվականի ինն ամիսների հաշվեքննությամբ արձանագրվել էր, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ հետ 30,600.7 հազ. դրամի 3 անվանում հանդերձանքի գնման համար կնքված 12.02.2020թ. թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-4 պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետների խախտման համար 2020 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ ենթակա էր հաշվարկել և գանձել տույժ՝ 110.3 հազ. դրամ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2020 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ հանդերձանքի մատակարարումները կատարել է պայմանագրով սահմանված ժամկետներին համապատասխան, և բացի այդ, 110.3 հազ. դրամի տույժը 2020 թվականի դեկտեմբերի 25-ին փոխանցվել է պետական բյուջե:
- ՀՀ ոստիկանությունը շենքերի, շինությունների ընթացիկ պահպանման և նորոգման համար «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ հետ կնքել է 24.03.2020թ. թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 պայմանագիր՝ 10,000.0 հազ. դրամ արժեքով: 2020 թվականի ընթացքում կազմված հինգ հանձնման ընդունման արձանագրություններով (ապրիլի 27-ից մինչև սեպտեմբերի 24-ը) կատարողին վճարվել է 6,642.5 հազ. դրամ, որից հետո ՀՀ ոստիկանությունը 26.11.2020թ. ծանուցումով՝ ծառայության մատուցման ժամկետը խախտելու համար միակողմանի լուծել է պայմանագիրը: Միաժամանակ, «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ տվյալները ներկայացվել են լիազոր մարմնին՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

նպատակով: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 18.12.2020թ. որոշումով ընկերությունը ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: ՀՀ ոստիկանությունը՝ ըստ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցման, տեղեկացրել է ընկերությանը, որ սահմանված կարգով վճարման պահանջագիր կներկայացնի «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ՝ 1,000.0 հազ. դրամ որակավորման ապահովման գումար և 100.0 հազ. դրամ պայմանագրի ապահովման գումար պետական բյուջե փոխանցելու համար: Սակայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից բանկ պետք է ներկայացվեր վճարման պահանջագիր՝ պայմանագրի գնի չափով 10,000.0 հազ. դրամ որակավորման ապահովման գումար և պայմանագրի գնի 10%-ի չափով 1,000.0 հազ. դրամ պայմանագրի ապահովման գումար պետական բյուջե փոխանցելու համար:

- ՀՀ ոստիկանությունը «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ հետ 2017 թվականի փետրվարի 15-ին կնքել է հինգ տարի գործողության ժամկետով գույքի հավատարմագրային կառավարման թիվ ԲԸԱՀ ԾՁԲ-03/2017 պայմանագիր, որով յուրաքանչյուր տարի նախատեսվել էր վճարել ընկերությանը հավատարմագրային կառավարման ծառայությունների վճար և հատուցման ենթակա ծախսերի գումար: 2020 թվականին ՀՀ ոստիկանության կողմից պայմանագրի շրջանակներում ընկերությանը որպես հավատարմագրային կառավարման ծառայությունների վճար փոխանցվել է 486,100.0 հազ. դրամ և հատուցման ենթակա ծախսերի համար՝ 2,576,610.5 հազ. դրամ, կամ ընդամենը ընկերությանը վճարվել է 3,062,710.5 հազ. դրամ:

Հավատարմագրային կառավարումը իրականացնելու շրջանակներում «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ տեխնիկական սպասարկման ծառայությունների գնման համար «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ հետ 2018 թվականի հունվարի 31-ին կնքել է պայմանագիր, որով գնման առարկայի գինը կազմել է 690,024.0 հազ. դրամ (առանց ԱԱՀ), կամ ամսական՝ 57,502.0 հազ. դրամ (առանց ԱԱՀ):

Պայմանագրով սահմանված են մատուցվող ծառայությունների երեք բաղադրիչներ՝

– մեկ արագաչափի տարեկան սպասարկման արժեքը՝ 1,296.0 հազ. դրամ, 183 հատ արագաչափի համար՝ 237,168.0 հազ. դրամ,

– մեկ խաչմերուկի տարեկան սպասարկման արժեքը՝ 1,728.0 հազ. դրամ, 136 հատ խաչմերուկներում տեղադրված տեսադիտարկման խցիկների սպասարկման համար՝ տարեկան՝ 235,008.0 հազ. դրամ, և 141,000.0 հազ. դրամ՝ համադրված 141 տպասալիկների տարեկան ծրագրային ապահովման լիցենզիաների արժեք, կամ ընդամենը՝ 376,008.0 հազ. դրամ,

– «Էլլիպս Ջի Էյ» ընկերության կողմից սպասարկվող Երևան քաղաքի Իսակովի 9, Զ. Քանաքեռցու և Ն. Տիգրանյան 27 հասցեներում տեղակայված խախտումների արձանագրման կենտրոններում առկա գույքի և համակարգերի կարգաբերման, թեսթավորման, շահագործման և սարքավորումների անխափան աշխատանքի ապահովմանն ուղղված տեխնիկական միջոցառումների համար՝ տարեկան 112,000.0 հազ. դրամ:

2018 թվականին կողմերի միջև կնքված պայմանագրի գործողության ժամկետը սահմանված էր մինչև 2022 թվականի փետրվարի 15-ը: Սակայն, 2019 թվականի դեկտեմբերի 26-ին «Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ և «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ միջև կնքվել է ծառայությունների վճարովի մատուցման նոր պայմանագիր, որի ամսական արժեքը ներառյալ ԱԱՀ կազմել է 69,000.0 հազ. դրամ: Պայմանագրի հավելված 1-ով սահամանվել են ծառայությունների մատուցման նույն երեք բաղադրիչները, սակայն, ի տարբերություն 2018 թվականին կնքված պայմանագրի, 2020 թվականի համար պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված չէ յուրաքանչյուր բաղադրիչով մատուցվող ծառայության արժեքը: Հաշվի առնելով 2018 և 2020 թվականների համար կնքված պայմանագրերի նույն արժեքները, 2020 թվականի համար ծառայությունների մատուցման պայմանագրի 3-րդ բաղադրիչի արժեքը փաստացի ևս կազմում է 112,000.0

հազ. դրամ, որի ծախսի չափի հիմնավորումը հաշվարկային տվյալների բացակաության պատճառով հնարավոր չէ գնահատել:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված 2020 թվականի ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finans և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են ոչ էական անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացվում են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություններ

հազ. դրամ

Անհամապատասխանություն	**Իրավական ակտ**	**Գումար**
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Պահապան» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-31-1 պայմանագիր	295.5
Մատակարարումների ուշացումների համար ենթակա է հաշվարկել և գանձել տույժ	«Պահապան» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2020-ՈՍ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-32-1 պայմանագիր	373.5
Պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից միակողմանի լուծվել է և ենթակա է գանձել որակավորման ապահովման գումար	«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 պայմանագիր: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշում	10,000.0
Պայմանագիրը ՀՀ ոստիկանության կողմից միակողմանի լուծվել է և ենթակա է գանձել պայմանագրի ապահովման գումար	«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՇԵՆՔ-2020/Ա-36 պայմանագիր: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշում	1,000.0
Հավատարմագրային կառավարման պայմանագրի շրջանակում հնարավոր չէ գնահատել երեք սերվերների տեխնիկական սպասարկման տարեկան 112,000.0 հազ. դրամի ծախսի չափի հիմնավորումը	«Սեքյուրիթի Դրիմ» ՍՊԸ և «Էլլիպս Ջի էյ» ՍՊԸ միջև 2019 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված պայմանագիր	-

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ և բացատրություններ չունի:

ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ ոստիկանությունում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննության արդյունքում ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացվել էր հետևյալ առաջարկությունը (աղյուսակ 6).

Աղյուսակ 6

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկություններ

ձեռնարկել միջոցներ արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ	ընդունված է	ընթացքում

ՀՀ ոստիկանությունում 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննության վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և ՀՀ հաշվեքննիչ պալատին է ներկայացվել արձանագրված անհամապատասխանութնունների վերացման ուղղությամբ միջոցառումների ծրագիր, որով անհամապատասխանութնունների վերացման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի մարտի 10-ը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ոստիկանությանը՝

– ձեռնարկել միջոցներ արձանագրված անհամապատասխանությունները վերացնելու ուղղությամբ:

Հավելված 1

ՀՀ ոստիկանության 2020 թվականի արդյունքի չափորոշիչները

Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար				
Արդյունքի չափորոշիչ	**Պլանային ճշտված ցուցանիշ**	**Փաստացի ցուցանիշ**	**Ճշտված պլանի/փաստացի ցուցանիշների տարբերություն**	**Տարբերության պատճառը**
Համայնքային ոստիկանության ու անչափահասների գործերով/ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումներում հսկողության տակ գտնվող անձանց թիվ, հատ	7013	6502	511	Համաներմամբ ազատված անձանց մեծ մասի հաշվառման ժամկետն ավարտվել է:
Պարեկապահակետային ծառայություն իրականացնող պարեկային կարգախմբերի կողմից վերահսկվող երթուղիների միջին օրական երկարություն, կմ	348940	345116	3824	Նվազումն էական չէ:
Դիմումների և հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերի թիվ, հատ	210000	226797	-16797	ՀՀ ոստիկանության նկատմամբ քաղաքացիների վստահության մակարդակի բարձրացում:
Բացահայտված առանձնապես ծանր հանցագործությունների թիվ, հատ	201	258	-57	ՀՀ ոստիկանության ռեսուրսների ու միջոցների նպատակային և արդյունավետ բաշխում:
Բացահայտված ծանր հանցագործությունների թիվ, հատ	1888	2111	-223	Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետության բարձրացում:
Բացահայտված միջին ծանրության հանցագործությունների թիվ, հատ	4308	4397	-89	Լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացում:
Բացահայտված ոչ մեծ ծանրության հանցագործությունների թիվ, հատ	11656	11040	616	Պայմանավորված է արտակարգ/ռազմական դրության ընթացքում աշխատանքի գերծանրաբեռնվածությամբ:
Հայտնաբերված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվ, հատ	1550	1114	436	Հասարակության շրջանում կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության ձևավորում, բացահայտված հանցագործությունների և կիրառված պատժամիջոցների մասին հասարակության իրազեկվածության բարձրացում:
Հայտնաբերված մարդու թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի թիվ, հատ	8	6	2	Պայմանավորված է ոլորտում կատարվող օպերատիվ-կանխարգելիչ աշխատանքների ակտիվացմամբ, ինչպես նաև արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված տեղաշարժի սահմանափակմամբ:

Հայտնաբերված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության թիվ, հատ	940	872	68	Խնդրով զբաղվող իրավապահ մարմինների համագործակցության ակտիվացում, լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում թմրամիջոցների մաքսանենգության ուղիների հայտնաբերում և արգելափակում:
Ձերբակալված անձանց պահելու վայրերում ձերբակալված և կալանավորված անձանց թիվ, անձ	3200	2209	991	Քննիչների կողմից ձերբակալման վերաբերյալ կայացված որոշումների թվի նվազում:
Զանգվածային միջոցառումների թիվ, որոնց ընթացքում ապահովվել է հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն, հատ	6000	5477	523	Պայմանավորված է արտակարգ/ռազմական դրությամբ:
ՀՀ ոստիկանության զորքերի պարեկային կարգախմբերի կողմից վերահսկվող երթուղիների միջին օրական երկարություն, կմ	0.93	1684	-1683.1	Ծառայության վերակազմակերպում:
Հանցագործության կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող հայտնաբերված հետախուզվողների տոկոսի աճ /բացառությամբ ՀՀ քր. օր-ի 327 հոդ. նախատեսված դեպքերի (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)	2	0	2	Արտակարգ դրությամբ պայմանավորված միջազգային գործընկերների հետ համագործակցության որոշակի նվազում, արտերկրում հայտնաբերված և էքստրադիցիայի ենթակա անձանց հանձնման, ինչպես նաև կամավոր հանձնվողների ՀՀ մուտքի հետ կապված խոչընդոտներ:
Հատուկ և կարևորագույն օբյեկտների պահպանության, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման ընթացակարգերին համապատասխան ՀՀ ոստիկանության զորքերի կողմից իրականացվող ծառայությունների արդյունավետության ապահովում (%) (խախտման դեպքեր չեն արձանագրվել)	100	100	0	
Պարեկապահակետային ծառայություն իրականացնող պարեկային կարգախմբերի ծառայության տևողությունը, օր/ժամ	24	24	0	
ՀՀ ոստիկանության զորքերի պարեկային կարգախմբերի ծառայության տևողությունը, օր/ժամ	7	7	0	
Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում				
Պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվ, հատ	192	192	0	
Պահպանվող օբյեկտներում ներօբյեկտային ռեժիմի խախտման հետ կապված հանցագործությունների կանխարգելում (%) (հանցավոր ոտնձգությունների բացառում)	100	100	0	
Պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտներում ծառայության տևողությունը, օր/ժամ	24	24	0	

Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում				
Պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվ, հատ	4176	3420	756	Նվազումը պայմանավորված է մի շարք կայուն պահակետերով պահպանվող օբյեկտների պետական պահպանությունը դադարեցվելու և մասնավոր պահնորդական կազմակերպությունների կողմից իրականացվելու հանգամանքով:
Պահպանվող օբյեկտներում ներօբյեկտային ռեժիմի խախտման հետ կապված հանցագործությունների կանխարգելում (%) (հանցավոր ոտնձգությունների բացառում)	100	98.6	1.4	Նվազումն էական չէ:
Պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտներում ծառայության տևողությունը, օր/ժամ	24	24	0	
ՀՀ ոստիկանության զորքերի կարիքների բավարարում				
Ավտոմեքենաների քանակ, հատ	0	0	0	
Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ	0	0	0	
Այլ սարքավորումների քանակ, հատ	50	50	0	
Սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի	4.5	4.5	0	
Ավտոմեքենաների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի	0	0	0	
Վարչական սարքավորումների քանակ, հատ	40	40	0	
Այլ մեքենաների և սարքավորումների քանակ, հատ	2	2	0	
ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության շենքային պայմանների բավարարում				
Որակի տեխնիկական հսկողության փաստաթղթերի քանակ	1	1	0	
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում				
Տրված վիզաների թիվ, հատ	92000	15399	76601	Քաղաքացիների դիմելիության ընդհանուր թվի կրճատում՝ պայմանավորված հայտարարված արտակարգ/ռազմական դրությամբ:
Տրված կացության ժամանակավոր և մշտական կարգավիճակների թիվ, հատ	8200	7787	413	
Քաղաքացիների ըստ բնակության վայրի հաշվառման թիվ, հատ	210000	168719	41281	
Քաղաքացիների ըստ բնակության վայրի հաշվառումից հանելու թիվ, հատ	140000	102959	37041	
Տրված նախկին նմուշի անձնագրերի թիվ, հատ (ՀՀ կառ. 25.12.1998թ. թիվ 821 որոշմամբ հաստատված)	410000	242698	167302	
Տրված կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող	12000	9745	2255	

էլեկտրոնային անձնագրերի թիվ, հատ				
Նույնականացման քարտերի թիվ, հատ	100000	71292	28708	
Կոնվենցիոն փաստաթղթերի թիվ, հատ	350	223	127	
Կացության քարտերի թիվ, հատ	8700	7787	913	
Հասցեատեղեկատու ծառայության կողմից տրված տեղեկանքների թիվ, հատ	95000	51635	43365	
Միջազգային համաձայնագրերի (նաև ստանդարտների) պահանջներին համապատասխանող կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրերի հատկացում, տոկոս	100	100	0	
Միջազգային համաձայնագրերի (նաև ստանդարտների) պահանջներին համապատասխանող նույնականացման քարտերի հատկացում, տոկոս	100	100	0	
Նախկին նմուշի անձնագրերի հատկացում, տոկոս	100	100	0	
Կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրեր տրամադրելու ժամկետ, օր	15	15	0	
Նույնականացման քարտեր տրամադրելու ժամկետ, օր	15	15	0	
Նախկին նմուշի անձնագրեր տրամադրելու ժամկետ, օր	5	5	0	
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում				
Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ	265	264	1	Պայմանավորված է տարվա ընթացքում կարիքը վերանայելու հանգամանքով:
Համակարգչային սարքավորումների քանակ, հատ	330	218	112	
Այլ սարքավորումների քանակ, հատ	50	30	20	
Սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի	4.5	4.5	0	
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավում				
Որակի տեխնիկական հսկողության փաստաթղթերի քանակ	1	1	0	
Առողջապահական ծառայությունների տրամադրում				
Ամբուլատոր-պոլիկլինիկական այցելությունների թիվ, հատ	125785	67231	58554	Կապված է պլանային բժշկական զննության (դիսպանսերիզացիայի) դադարեցման հետ:
Աշխատունակության ժամանակավոր կորուստով ուղեկցվող հիվանդությունների դեպքերի քանակը ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում, հատ	2450	3380	-930	Պայմանավորված է ուժեղացված արտաքին ծառայությամբ:
ՈԲՀ-ում փորձաքննության ենթարկված անձանց թիվ, անձ	3000	4073	-1073	Պայմանավորված է պարեկային ծառայության ներդրման գործընթացով:
Արձանագրված տարափոխիկ հիվանդությունների դեպքերի և վերջիններիս կապակցությամբ անցկացված էպիդեմիոլոգիական հետազոտությունների քանակ, հատ	220	1922	-1702	Պայմանավորված է համավարակի տարածման հետ:

Հիվանդանոցային բուժօգնություն ստացած ՀՀ ոստիկանության ծառայողների, ոստիկանության կենսաթոշակառուների, նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև այդ իրավունքից օգտվող այլ անձանց թիվ, անձ	2000	516	1484	Պայմանավորված է հոսպիտալը կորոնավիրուսով հիվանդների բուժման նպատակով վերապրոֆիլավորման և ՀՀ առողջապահության նախարարության անմիջական ենթակայությամբ աշխատելու հանգամանքով:
Աշխատունակության ժամանակավոր կորստով ուղեկցվող հիվանդությունների դեպքերի միջին տևողություն, օր	6.5	4.9	1.6	Պայմանավորված է ուժեղացված արտաքին ծառայությամբ:
Հոսպիտալիզացիայի մեկ դեպքի միջին տևողություն, մ/օր	8.5	10.3	-1.8	Փաստացի ցուցանիշը վերագրվում է 1-ին եռամսյակին՝ պայմանավորված հոսպիտալը կորոնավիրուսով հիվանդների բուժման նպատակով վերապրոֆիլավորման հանգամանքով:
Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց				
Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին տրամադրված դեղորայքի տեսականի, հատ	500	455	45	Փաստացի տրամադրված դեղորայքի տեսականի:
ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի կազմակերպման տեղեկատվական աջակցություն				
Տեղամասային ընտրական հանձնաժողովներ	2020	0	2020	ՀՀ կառավարության 04.06.2020 թ. N 890-Ն որոշմամբ աշխատանքները կասեցվել են:
Ընտրողների ծանուցում/մարդ	2579832	0	2579832	
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն				
Բակալավրիատի կրթական ծրագրով առկա ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվ, անձ	212	140	72	Պայմանավորված է սովորողների թերհամալրվածության և անբավարար առաջադիմության պատճառով ազատվելու հանգամանքով:
Մագիստրատուրայի կրթական ծրագրով առկա ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվ, անձ	20	10	10	
Բակալավրիատի կրթական ծրագրի միջազգային ստանդարտներին (Եվրոպական բարձրագույն կրթական տարածք ԵԲԿՏ) համապատասխան կրթության տրամադրում, տոկոս	100	100	0	
Մագիստրատուրայի կրթական ծրագրի միջազգային ստանդարտներին (Եվրոպական բարձրագույն կրթական տարածք ԵԲԿՏ) համապատասխան կրթության տրամադրում, տոկոս	100	100	0	
Բակալավրիատի կրթական ծրագրով ուսման տևողությունը, շաբաթ	46	46	0	
Մագիստրատուրայի կրթական ծրագրով ուսման տևողությունը, շաբաթ	46	46	0	
Միջին մասնագիտական կրթության ծառայություն				
Միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվ, անձ	119	72	47	Պայմանավորված է սովորողների թերհամալրվածության և անբավարար առաջադիմության պատճառով ազատվելու

				հանգամանքով:
ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված չափորոշիչներին համապատասխան կրթության տրամադրում, տոկոս	100	100	0	
Միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսման տևողությունը, շաբաթ	46	46	0	
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն				
Նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվ, անձ	60	24	36	Պայմանավորված է սովորողների թերհամալրվածության և անբավարար առաջադիմության պատճառով ազատվելու հանգամանքով:
ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված չափորոշիչներին համապատասխան կրթության տրամադրում, տոկոս	100	100	0	
Նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսման տևողությունը, շաբաթ	48	48	0	
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում				
Ոստիկանության ոլորտի քաղաքականությանը վերաբերվող օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի թիվ, հատ	100	150	-50	Օրենսդրական նախաձեռնությունների ակտիվացում՝ գործող իրավակարգավորումների արդյունավետությունը և ՀՀ ոստիկանության գործունեության թափանցիկությունը բարձրացնելու նպատակով:
ՀՀ ոստիկանության կողմից դատարաններում բերված հայցերի թիվ, հատ	300	584	-284	Պայմանավորված ռազմական և արտակարգ դրության պայմաններում արգելված հավաքների կազմակերպման թվի աճով, որոնց շրջանակներում ՎԻՎՕ 182-րդ և 172.3-րդ հոդվածներով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ մեծաքանակ գործեր են ուղարկվել դատարաններ:
ՀՀ ոստիկանության դեմ դատարաններում բերված հայցերի թիվ, հատ	8000	4098	3902	Պայմանավորված է արտակարգ/ռազմական դրությամբ: Ներկայումս դատարաններում առկա ևս 160 գործ փոխանցվել է նախորդ տարիներից: ՀՀ ոստիկանության դեմ իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներով բողոքների թվի նվազում:
Հսկողության վերցված ՀՀ ոստիկանության ղեկավարության հանձնարարականների և պլանային միջոցառումների թիվ, հատ	300	204	96	ՀՀ ոստիկանության ղեկավարության օպերատիվ խորհրդակցությունների կրճատում՝ պայմանավորված արտակարգ/ռազմական դրությամբ:

ՀՀ ոստիկանության դեմ վարչական դատարաններում բերված հայցերից բավարարվածների մասնաբաժին, տոկոս	16	24	-8	Մասնաբաժնի կրճատման տոկոսը հնարավոր չէ հաշվարկել միայն 2020թ. բերված և բավարարված հայցերի մասով, քանի որ բավարարված հայցերի թվում ներառված են նաև նախորդ տարիներից փոխանցված հայցեր:
ՀՀ ոստիկանության կողմից դատարաններում բերված հայցերի բավարարում, տոկոս	60	25	35	Գործերի մի մասով դատաքննությունը դեռևս ընթանում է և հնարավոր չէ կանխատեսել, թե վճիռը որ եռամսյակում կիրապարակվի:
Հսկողության վերցված ՀՀ ոստիկանության ղեկավարության հանձնարարականների և պլանային միջոցառումների կատարում, տոկոս	95	78.9	16.1	Արտակարգ/ռազմական դրությամբ պայմանավորված՝ որոշ միջոցառումներ չեղարկվել կամ տեղափոխվել են 2021թ.:
ՀՀ ոստիկանության կողմից համակարգվող ներգերատեսչական, միջգերատեսչական, երկկողմ և բազմակողմ միջազգային ծրագրերով հաշվետվությունների ներկայացում /կիսամյակը 1 անգամ/, հատ	36	36	0	
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում				
Վարչական սարքավորումների քանակ, հատ	28	28	0	
Այլ մեքենաների և սարքավորումների քանակ, հատ	178	76	102	Պայմանավորված է տարվա ընթացքում կարիքը վերանայելու հանգամանքով:
Սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի	4.5	4.5	0	
Այլ մեքենաների և սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի	4.5	4.5	0	
Ավտոմեքենաների քանակ, հատ	12	12	0	
Ավտոմեքենաների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ (տարի)	8.3	8.3	0	
Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ	323	304	19	Պայմանավորված է մասնակցի կողմից ստանձնած պարտավորության կատարումից հրաժարվելու հանգամանքով:
ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների շենքային պայմանների բավարարում				
Նախագծահետազոտական փաստաթղթերի թիվ (հատ)	1	1		
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում				
Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայություն իրականացնող կարգախմբերի կողմից վերահսկվող երթուղիներում կատարված միջին օրական վազք, կմ	39032	43106	-4074	Պայմանավորված է արտակարգ դրության ընթացքում պարետատան որոշմամբ սահմանից մինչև նշանակված վայր այլ պետություններից ՀՀ տարածք մուտք գործող բեռնատարների պարտադիր ուղեկցման հանգամանքով:

ՃՈ կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության օրենսդրության պահանջների խախտման համար նշանակված տուգանքների և ճանապարհային երթևեկության կանոնների, ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական նորմերի պահանջների խախտման համար նշանակված տուգանքների քանակ, հատ	1749000	1717869	31131	Պայմանավորված է ռազմական դրությամբ:
Տրամադրված վարորդական վկայականների քանակ, հատ	70000	69943	57	Պայմանավորված է փաստացի դիմելիությամբ:
Տրամադրված հաշվառման վկայագրերի քանակ, հատ	190000	123100	66900	Արտակարգ դրության ընթացքում ՃՈ հաշվառման քննական ստորաբաժանումներն աշխատել են սահմանափակ աշխատանքային ռեժիմով:
Ընդունված տեսական և գործնական քննությունների թիվ, հատ	70000	99812	-29812	Պայմանավորված է վարորդական իրավունքի վկայականի համար հանձնվելիք տեսական և գործնական քննությունների իրավական նորմերի փոփոխությամբ:
Գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված գործողություններ, հատ	200	267	-67	Պայմանավորված է գյուղատնտեսական աշխատանքների ակտիվացմամբ:
Տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայականների թիվ, հատ	16	14	2	Պայմանավորված է փաստացի դիմելիությամբ:
Վարման իրավունքի վկայականի կրկնօրինակի տրամադրում, հատ	7000	5489	1511	Արտակարգ դրության ընթացքում ՃՈ հաշվառման քննական ստորաբաժանումներն աշխատել են սահմանափակ աշխատանքային ռեժիմով:
Գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայական տալու համար քննությունների քանակ (պետական մենաշնորհային բնույթի ծառայություն) թիվ, հատ	16	45	-29	Պայմանավորված է գյուղատնտեսական աշխատանքների ակտիվացմամբ:
Միջազգային համաձայնագրերի (նաև ստանդարտների) պահանջներին համապատասխանող վարորդական վկայականների տրամադրում, տոկոս	100	100	0	
Միջազգային համաձայնագրերի (նաև ստանդարտների) պահանջներին համապատասխանող հաշվառման վկայագրերի տրամադրում, տոկոս	100	100	0	
Վարորդական վկայական տրամադրելու միջին ժամկետ, օր	1	1	0	
Հաշվառման վկայագիր տրամադրելու միջին ժամկետ, օր	1	1	0	
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում				
Տրամադրված հաշվառման համարանիշերի քանակ (զույգ), հատ	290933	119828.5	171104.5	Արտակարգ դրության ընթացքում ՃՈ հաշվառման քննական ստորաբաժանումներն աշխատել են սահմանափակ աշխատանքային ռեժիմով:
Գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների պետական համարանիշների քանակ, հատ	200	173	27	

Տրակտորային կցանքների համարանիշերի քանակ, հատ	5	3	2	
Պետհամարանիշերի կրկնակի հատկացման քանակ, հատ	1600	2316	-716	Պայմանավորված է դիմելիությամբ:
Հաշվառված տրանսպորտային միջոցներին (այդ թվում միջազգային) համապատասխանող հաշվառման համարանիշերի տրամադրում, տոկոս	100	100	0	
Հաշվառված տրանսպորտային միջոցներին հաշվառման համարանիշերի վահանակների տրամադրման միջին ժամկետ, օր	1	1	0	
ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության կարիքի բավարարում				
Ավտոմեքենաների քանակ, հատ	0	0	0	
Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ	53	48	5	Պայմանավորված է տարվա ընթացքում կարիքը վերանայելու հանգամանքով:
Այլ սարքավորումների քանակ, հատ	593	327	266	
Սարքավորումների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի	4.5	4.5	0	
Ավտոմեքենաների ծառայության կանխատեսվող միջին ժամկետ, տարի	4.5	4.5	0	
ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների շենքային պայմանների բավարարում				
Որակի տեխնիկական հսկողության փաստաթղթերի քանակ (հատ)	1	1	0	